POWER SAVER REWARDS PROGRAM
(ԷՆԵՐԳԱԽՆԱՅՄԱՆ ԲՈՆՈՒՍԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ)

Օգնեք Կալիֆոռնիային այս ամառ կանխել էլեկտրամատակարարման խափանումները: Մասնակիցները վճարվում են բարձր պահանջարկի ժամանակահատվածներում և արտակարգ իրավիճակներում էներգասպառման կրճատման համար՝ նպատակ ունենալով խուսափել հովհարային անջատումներից: Մասնակցությունը կամավորության սկզբունքով է, և էներգասպառումը չկրճատելու դեպքում տույժեր նախատեսված չեն:

Ծրագրի պահանջները
Հավակնելու համար սպառողների դրամական պարգևատրմանը՝ Power Saver Rewards միջոցառման ընթացքում սովորականից քիչ էլեկտրաէներգիա սպառեք:

Խրախուսումը
1,00$
՝ մեկ կՎտ/ժ-ի (էներգիայի) դիմաց

Ծանուցման ժամկետը
Միջոցառումից մեկ օր առաջ

Մասնակցությունը
Բաժանորդները չեն կարող մասնակցել SDG&E («Սան-Դիեգոյի գազամատակարարում և էլեկտրամատակարարում» ընկերության) այլ խրախուսական ծրագրերին՝ ներառյալ Capacity Bidding-ը կամ երրորդ կողմերի ծրագրերը:

Ռիսկերը
Ձեր էներգասպառումը չկրճատելու դեպքում՝ տույժեր նախատեսված չեն:

Առցանց
sdge.com/powersaver

Հեռախոս
1-800-411-7343

Ծրագրի նկարագրությունը
Power Saver Rewards ծրագիրը (Էներգախնայման բոնուսային ծրագիրը) պարգևատրում է կենցաղային հաճախորդներին՝ ընդհանուր էներգասպառումը պահանջարկի ամենաբարձր ժամանակահատվածներում կամավոր կրճատելու համար:

Ձեր և ձեր տան օգուտները
Power Saver Rewards ծրագրի (Էներգախնայման բոնուսային ծրագրի) մասնակիցները Flex Alert-ի կամ նահանգային ցանցի այլ արտակարգ իրավիճակների ժամանակ էներգիայի սպառումը կրճատելու համար կստանան մեկ կՎտ/ժ-ի դիմաց 1,00$ սպառողի հաշվին:

Ո՞վ մասնակցելու իրավասություն ունի:
«Խելացի» հաշվիչով բնակելի տներում ապրող՝ SDG&E®-ի էլեկտրաէներգիայի ցանկացած սպառող: Կենցաղային բաժանորդները չեն կարող մասնակից լինել SDG&E-ի այլ խրախուսական ծրագրերի, ինչպիսիք են Capacity Bidding-ը կամ երրորդ կողմերի որևէ ծրագիր: Մանրամասն տեղեկություններ ստանալու համար տես պաշտոնական դրույթները և պայմանները: Ծրագրին մասնակցելու իրավասություն ունեն այն կենցաղային բաժանորդները, ովքեր մասնակցում են Community Choice Aggregator-ին (CCA) կամ Direct Access-ին (DA):

Ինչպե՞ս է աշխատում ծրագիրը:
Ցանցի արտակարգ իրավիճակների ժամանակ California Independent System Operator-ը (CAISO-ն՝ Կալիֆոռնիայի էներգետիկ համակարգի անկախ օպերատորը) Flex Alert ծանուցում կամ ցանցի այլ արտակարգ իրավիճակ կհայտարարի: Երբ դա տեղի ունենա, SDG&E-ն Power Saver Rewards ծրագրի միջոցառում կհայտարարի և դրանից մեկ օր առաջ ծանուցում կուղարկի:

Կոնտակտային տվյալները
Մանրամասն տեղեկություններ ստանալու կամ Power Saver Rewards ծրագրին անդամագրվելու համար այցելեք ***sdge.com/powersaver*** կայքէջը:

© 2024 San Diego Gas & Electric Company. Ապրանքային նշաններն իրենց համապատասխան սեփականատերերի սեփականությունն են: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

S2450003 ARM 0424